

ՄԵԼԿ

Տարեկան դիմել 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:
Առանձին հոմարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյալի նմանագրություններ:
Օտարաբնակացիք դիմում են ուղղակի
Խիֆա. Редакция «Мелк»

Նմանագրությունը բաց է առաջառն 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տոն օրերից):
Յայտարարությունը ընդունվում է ամեն լիցուով:
Յայտարարությունները համար գծարում են
խաթանային թաղի 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԵՐԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ, Նամակ Ս. Պետեր-
բուրգից: Նամակ վերին-Ազովիայից, Նամակ
Խմբագրի: Նամակ Խմբագրի: Ներքին լուրեր:
—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ, Ֆրանսիայի Անգլիա,
Շվեյցարիա, Նամակ Պարսկաստանից,
—ՀԵՌԱՆԻՐՆԵՐԸ, —ՏԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ,
ԲԱՆԱՐԱՐԱԿՈՒԹԻՒՆ, Մատենագրություններ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻՅԻՆ

Յուլիսի 28

Մի քանի շաբաթ դրանից առաջ, ձեր պատու-
կան լրագրի՝ Ս. Պետերբուրգից լուր էին հա-
ղորդել, որ իրր թէ տեղւոյ հայ հարուստներից
մինը H. Kiepert-ին ապստամբ է Հայաստանի
քարտեզը. այս լուրը միանգամայն անհիմն է,
իմ պատուելի քարեկամ պ. Ս. Ս. Գերմանիայի
Misdroy Bad-ից ինձ գրում է, թէ նա հանքա-
յին ջրերում ինքն անձամբ պատկեր է ունեցել
այցելելու պատկառելի գերմանացի ուսումնա-
կան Kiepert-ին և հարցրել է նրանից, ճշմարիտ
է արդեօք, որ նա պատրաստում է Հայաստանի
քարտեզի: Տրամաբանությունը: Առումնականը
պատասխանել է թէ Ս. Պետերբուրգից ոչ ոք
նրան բան չէ ապացարկել այդպիսի մի քարտեզի
մասին. բայց վերնետիկի Միլիթարան միաբա-
նուցեան արքան՝ հայկաբան Վ. Ալիշանեանը բազ-
միցս դիմել է նրան, այս առաջարկությունը և
ինքն Kiepert դժուարացել է մինչև այժմ ի-
րագործելու հայր Ալիշանեանի առաջարկությունը
նախ, որ շատ զբաղված է զանազան կողմերից
իրան ապստամբ աշխարհագրական քարտեզնե-
րի հրատարակություններ, երկրորդ, երրորդ, ճա-
նապարհորդները դեռ մանրամասնորեն չեն ու-
սումնասիրել Հայաստանի տաճկաց և պարսից
իշխանությունների ներքին գտնվող երկրները, իսկ
առ ձեռն պատրաստ տեղեկությունները տակա-
ւին թերի են և հերիք չեն Հայաստանի քար-
տեզի հրատարակությանը ձեռնարկելու համար:
Իացի դրանից, պ. կիպերտը առեալցրել է թէ
նա երկու տարուց յետոյ մտադիր է չարուստ-

կելու հայոց լուրեր, ուսումնասիրություններ և քա-
ղապայ է, որ այդքան ժամանակամիջոցում, գու-
ցե, իր ստացած տեղեկությունները Հայաստանի
մասին ևս առաել կը ճիշտան ու աշխատեան
հեշտ կը լինի ձեռնամուխ լինել գործին: Իմ
մտերիմ քարեկամս երկուսից նամակը ինձ ա-
ռիթ է տալիս մի քանի խորհրդածություններ
անելու. պ. կիպերտի խոսքերից յետոյ, ակամայ
հարց է ծագում թէ ուսուց, տաճկաց և պար-
սից հայտնակ հայերի գաղթներում հազարավոր
մանուկները որպիսի քարտեզների միջոցով
թեամբ ուսումնասիրում են Հայաստանի հին և
նոր աշխարհագրությունը. տարակույս չը կայ, որ
վերնետիկում այս բնագավառը քարտեզները նշա-
նաւոր ծառայություն չեն կարող մատուցանել
մեր ուսումնասիրներին, ուրեմն, հարկը պա-
հանջում է անյապաղ վերացնել այս թերու-
թիւնը, ապա թէ ոչ, շատ դժուար է հայոց պատ-
մութեան գաղափարները առանց լաւ քարտեզի
ուղեկցության: Մենք հայերս սովոր ենք եղել
միշտ պատրաստ պաշար, բնորոշել անդիմացող,
ֆրանսիացուց և գերմանացուց գիտնականներից,
որոնք, անցնալ դարերից սկսեալ, անդադար
մշակում են մեր գրականությունը, իրանց կրի-
տիկական յողաւածներով մեկնում են մեր հին
հնդկականների երկարությունները, չը շատանալով
զբաղում, նորա չեն հրամարում, մինչև անգամ,
նպատակ հայոց ազգի վերածնություն. Ահա պ.
Կիպերտին հայկական դատը արժարելու համար
կերպարում, մի լրագիր է հիմնում Փարիզում.
պ. կիպերտը ժամանակով Հայաստանի քարտեզն
է ցանկանում հրատարակել ի պէտս մեր ու-
սումնասիրների. միթէ երբեքսուց այսքան
համակրությունից յետոյ էլ մեր ազգը ձեռքեր
կործարկել ծաղած պիտի յարատեւ անյարմու-
թեան մէջ կամ ընթանայ կրիայի քայլերով:
Ցանկալի էր լինել, որ Կ. Պոլսոյ Միացեալ ըն-
կերթիւնները վարժապետներ ուղարկելով Հա-
յաստանում և կրիկայում հիմնած դպրոցնե-
րին, պատուելին սոյն վարժապետներին ու-
սումնասիրել իրանց յաճախելով երկրները ա-
մենայն կողմանէ, թող մեր տաճկաբան եղբայր-
ները օրինակ առնեն երբեքսուց պաշտօնական-
րից: Անգլիացուց փոխ-հիւպատոսը Վանում՝ պ.
Ալեյսոնը իր պաշտօնից զատ, յանձնարարու-

թիւն ունի նաև հնագիտական հետազոտություն-
ներ անել Հայաստանում և անում է միշտ: Միա-
ցեալ ընկերութեան վարժապետների տեղեկու-
թիւնները շատ նպաստաւոր և անհրաժեշտ են
կիպերտի համար: Ս. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ.
անհատական սկզբունքի արգասիք պիտի լինի
մեր մէջ:

Խ. Կնիքարեան

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

Յուլիսի 23-ին

Անցնելով Ազովիոյ և նրա շրջակայ գիւղերի
փողոցներով, դուրս կը տեսնէք շատ տներ, որոնց
գուները ճակատին խիստ տախտակի կտորի վրա
գրած է «ФУРКТО—ВОДОЧНЫЙ ЗАВОДЪ»:
Այսպիսի գործարանների թիւը գուցէ 100—
200-ի համար: Այժմ Կոնստանդնուպոլիսէ այդ գործա-
րանները որոնողից են առել իրանց սկիզբը: Ա-
ռաջ Ազովիոյում և իր շրջակայ մի քանի հայա-
բնակ գիւղերում, քանի որ դեռ ակցիլի կառա-
վարությունը չէր սկսել իր գործունէությունը, իւ-
րաքանչիւր տուն ունէր երկու պղնձե աման: Սը-
րանցից մի կտորը, որ կախարէ (զափաղ) է կոչ-
վում, գործ էր անում միայն օդի պատրաստե-
լու ժամանակ, իսկ միւսը, որ մեծ կաթնայ է,
նոյնպէս խաբարանչիւր օր գործ էր անում: Նա
անհրաժեշտ կարասի էր գիւղացու տան մէջ:
Նրանով գիւղացին չոր էր տաքացնում լուացքի
ու հացի համար, կերակուր էր պատրաստում
հարսանիքի և ուրիշ այդպիսի գէպքերում, երբ
բազմություն պէտք է կերակուրէր, միս էր տապա-
կում ձմեռուց համար (դառուր) և այլն: Իսկ
ամառը թըլթի ժամանակ այդ երկու ամաններով
օդի էր պատրաստում իր տանը գործածելու հա-
մար: Իր տանը ասացի, որովհետև Ազովիոյում
և իր շրջակայքում շատ քիչ տուն կը գտնվի որ
15 ծառից աւելի թիւերի ունենայ: Իսկ այն 15
ծառ թիւից էլ գիւղացին միայն օդի չէ պատ-
րաստում, այլ մի մասը չորացնում է ձմեռուց
համար, միւսից մի (СИРОПЪ) է պատրաստում
և այլն: Ահա այս երկու ամաններն են, որոնք
յետոյ ստացան «ФУРКТО—ВОДОЧНЫЙ ЗАВОДЪ» ա-
նունը:

Օդի պատրաստելու իրաւունք տարէնը գուցէ
10—15 գիւղացի տանայ: Իրաւունքը ստանա-
լուց որոշեալ օրերը կամ օրը այդ ամանների
կնիքը քանդվում է ակցիլի կառավարությունից
նշանակած պաշտօնակատարի ձեռքով, իսկ երբ
լրանում է ժամանակը նորից կնքվում է և այն-
պէս մնում է ամբողջ տարին:

Օդի պատրաստելու համար գիւղացին պէտք է
իրաւունք ստանայ ակցիլի կառավարությունից,
որ գտնվում է Նախիջևանում 80 վերստ հեռու.
Ազովիոյից: Այդ իրաւունքը ստանալու համար
գիւղացին պէտք է չորս կամ հինգ օր չարչարվի
և միայն մատուցարանէ 15 րուբլի: Ստանալուց
նա վերադառնում է տուն, չարչարվում է տասը
օր մինչև թուրքի թըլթիլը (հասնել): Ապա նշա-
նակած օրը (գիւղի և ցեղի) նստում է այդ գոր-
ծարանի մօտ վայրէ և այրում և ստանում է շատ
շատ 3 կամ 4 պուդ օդի, որի պուդը եթէ ծա-
խելու լինի՝ կարծեալ 4—5 րուբլի: Երեկոյի գոր-
ծարաններ:

Ամսոյս 20-ին երեկոյան մատուցարանէ մօտը
մէկին զգալի եղաւ երկրաշարժի մի հարուած,
որից մի քանի տների պատեր տրաքեցան, բայց
ձեռք չհաս: Տեսց մօտ կէս րօպէ: Առաջի մօ-
տաւորապէս ժամը մէկին, որովհետև ինչպէս ա-
զովիցիների խելքը, նոյնպէս էլ ժամացոյցները
երբեք իրարու հետ չեն համաձայնում: Իրա-
քանչիւր անհատ Ազովիոյում առում է իմ դա-
տողությունը ուղիղ է, իմ ժամացոյցը ուղիղ է:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԿԻՆ

Կօֆոր, 31 յուլիսի

Շատ մօտ է մեզ այն ժամանակը, երբ հայը
և հայունի մոռացած իրանց մայրենի լեզուն
առիթ և աւելորդ էին համարում հայ լեզունով
խօսել, իրանց որոյց մայրենի լեզուն ուսու-
ցանել, իրանց նախնեաց պատմութեամբ զբաղ-
վել և մինչև անգամ իրանց հայ անուններ: Բայց
երբ լրագրությունը սկսաւ խօսել, դատել այդ
հակազդային ընթացքի մասին և հարուածել
նրան, երբ եկաւ արեւելեան ուսումնական
վերջին պատերազմը, երբ հայազգի և նրա դի-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ЗНАЧЕНИЕ РУССКАГО СЕКТАНТСТВА. —
ՌՈՒՍ ԱՎԱՆԳՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ
«Русская Мысль» ամսագիրը, յունվարի
տետրակ 1881

Վերջին ժամանակները ուսուց գրականու-
թիւնն ու մամուլը առաւել շատ սկսեցին պա-
րագել ուսու աղանդների հետազոտութեամբ: Ա-
ղանդների հետազոտողներից ամենանշանաւորն է
Ա. Ս. Պրուգավին, որին և պատկանում է վե-
րե յիշված յողաւածների մի շարքը, որ սկսվում
է Մոսկվայում հրատարակվող «Русская Мысль»
ամսագրի յունվարի տետրակից:

Պրուգավին նախել է իրան ուսու աղանդների
խղճմտաւոր ուսումնասիրութեանը և նրա գրչին
պատկանում են նոյն առարկայի վրա բազմաթիւ
յողաւածներ և «Голосъ» լրագրում:

Վերի յիշված յողաւածում Պրուգավին բերում
է նախ և առաջ բազմաթիւ վկայություններ և
հայեացքներ ուսու աղանդաւորների մասին այլ
և այլ նշանաւոր թէ օտարազգի և թէ ուսու հե-
ղինականների գրուածներից, ինչպէս Կոստոմարով,

Կելսիեւ, Հակոստատուլ, Մէկենդի-Աւալաս, Շչա-
պով, Սինիցին և այլն և այլն: Նա ծանօթաց-
նում է մեզ և այն բոլոր պաշտօնական գեկու-
ցումների հետ, որոնք Ալեքսանդր I և Նիկոլայ
I թագաւորներին ներկայացվեցան այլ և այլ
բարձր պաշտօնականներից, որոնք ուղարկվեցան
ուսու գաւառները այդ թագաւորների հրամանով
յատկապէս աղանդաւորների կեանքը, նրանց
վարդապետութիւնն ու ձգտումները ուսումնասի-
րելու համար: Այդ պաշտօնական հետազոտող-
ներից նշանաւոր էին Լիպարնով, Սինիցին, Ակ-
սակով, Բրեանչանինով և այլն:

Ռուս աղանդները ստուրկ բաղմաթիւ են: Բա-
ւական է յիշել այստեղ մի քանի անուններ. Ֆի-
լիպովցիներ, Ֆեդոսեւիցիներ, Բեդպոպովցիներ,
Նեմովկաններ, Զոգեւոր քրիստոնէաներ, Վօզդի-
խանցիներ, Սիւտանցիներ, Կոստոբորներ, Մօ-
լոկաններ, Դոտոնդիստներ, Խլիստներ, Ալօպցիներ
և այլն և այլն:

Բայց այդ բոլոր աղանդները կարելի է բաժա-
նել երկու որոշ խմբերի վրա, իրանց ուղղու-
թեան համեմատ. մի ստիկներ և քաղցիօնա-
ւորներ: Առաջինները գերադասում են ապա-
գայ երկնային կեանքը, հոգու փրկութիւնը, ներ-
կա աշխարհային երկրային կեանքից: Նրանք
պատրաստ են իրանց անձը ամեն բարիքներից
զրկել ներկայ երկրային կեանքում, միմյալն երկ-
նային թաղաւորութիւնը ժողովուրդէ և համար:
Նրանք տանջաւոր, մինչև անգամ, համարում են
անհրաժեշտ, այդ պատճառով չեն բողոքում աշ-
խարհային ոչ մի անիրաւութեան և անարդարու-

թեան դէմ: Իսկ և կատարեալ մի ստիկի դմ,
կրօնամոլութիւն:

Երկրորդ ուղղութեան աղանդները, բացի օ-
նաւիտներէ, իրանց կրօնական գաւառու-
թիւնները հիմքը բարոյական իմաստասիրու-
թիւնը դնելով, ձգտում են լոգիկապէս վերա-
նորոգել եկեղեցին, բարեօրել իրանց կեանքը,
յեղափոխել հասարակութիւնը, հոգում են ներ-
կա, երկրային կեանքի ձեւերը վերանորոգելու և
բարոյապէս բարեօրելու: Այդ վերջինների կրօ-
նական— բարոյական վարդապետութեան հետ
միասին ձեռք ձեռք տուած է ընթանում և
ստեղծական հասարակա-քաղաքական վերանորո-
գութիւնը:

Առաջվայ ժամանակներում աղանդաւորներին
անխնայ հաւածում էին. նրանց բանտարկում,
աքսորում, այրում, գլխատում, կախում, գլուխը
ջարդում, լեզուն կտրում էին և այլն և այլն:
Իսկ պատահում էր առաջվայ կայսրների ժամա-
նակի ճանձնած, չարչարված, հաւածված աղան-
դաւորները վերադառնում էին և սրտում ուն էին
պահում կառավարութեան դէմ: Այդ պատճա-
ռով, ինչպէս հաղորդում է Պրուգավին պաշտօ-
նական աղբիւրներից, տեսնելով որ նրանց հետ
քրիստոնէական կերպով չեն վարվում, աղանդ-
ներից շատերը յայտնեցին որ իշխանութիւնը
հակաքրիստոնէական է և վճռեցին իրանց աղօ-
թանքներում այլ ևս երբեք չաղծել իշխանու-
թեան համար:

Աղանդների մեծ մասը, ինչպէս Կոստոբորներ,
սիւտանցիներ, վօզդիխանցիներ, չոտոնդիստներ,

ընդունում են միմյալն աւետարանը, որպէս
սուրբ գիրք և ձգտում են ճշգրտութեամբ իրագոր-
ծել աւետարանի պատուէրները: Նրանք եկեղե-
ցիներ աւելորդ չինութիւններ են համարում, այլ
աղօթում են ամեն տեղ, որտեղ նրանցից մի
խումբ է հաւաքվում: Նրանք քահանայ, այսինքն
կառավարութեանից կամ եպիսկոպոսներից նշա-
նակված քահանայ չեն ընդունում, այլ նրանցից
ամեն մարդ, մինչև անգամ կին կարող է կանո-
նել ժողովի մէջ, կարող աւետարանը կնդանի
հասկանալի լեզուով, բացառել հանդիսականնե-
րին ֆրիստուրի խօսքերը, քարոզ ասել: Այսօր
նրանք հաւաքվում են մի տան մէջ,— և այն օրը
այն տան տէրը, որի մօտ հաւաքվել են, քահա-
նայ է, քարոզիչ է. միւս կիրակի գոտարկվում
են մի այլ տան մէջ,— և այն տան տէրը քահա-
նայ է այն օրը: Հոտոնդիստներ չեն ընդունում
ոչ եկեղեցի, ոչ քահանայ, ոչ խաչեր, ոչ մա-
սուէրներ, ոչինչ արտաքին արարողութիւն: Նը-
րանք ասում են թէ աւետարանը պէտք է կար-
դալ, ֆրիստուրի խօսքը պէտք է հասկանալ և
նրա համեմատ վարվել, բարոյական լինել, ազ-
նիւ լինել, ուրիշին չը հարատահարել. ոչորին չը
ձեռնալ,— ահա իսկական քրիստոնէութիւնը նը-
րանց կարծիքով.— և ոչ թէ խաչ հանել, աւետա-
րանի կազմը համբուրել առանց ըմբռնելու թէ
մէջը ինչ է գրված, եկեղեցու քարերը համբու-
րել կամ սուրբ պատկերները պաշտել: Վօզդի-
խանցիներ աւելի էլ հեռու են գնում: Նրանք
մերժում են մկրտութիւնը: Ի՞նչ կը նշանակէ մը-
կրտութիւն, ասում են նրանք,— զա կը նշանակէ